նուորների առողջութեան վերաբերութեամբ, ձգտել են ոչնչացնել գործարանների արդիւնքը, իսկ նոքա, որք հաշուել են այժմեան երկաթուղիների պատճառած՝ դժբաղդ դէպքերը, ձգտել են ոչնչացնել երկաթուղիները. Ո՛չ, դօկտոր, այդ օրինակ հետազօտութիւնները այդ նպատակով չեն լինում, այդ հասկանումէ անգամ իւրաքանչիւր մի գիմնազիայի աշակերտ, այնպէս որ ծուռ եզրակացութեան առիթ տալու համար երբէք չը պէտքէ մտածել.

(Ն—ր——Ն—ջեւն)　　　　Մակար Տ. Սարգսեան.

ՀԱՅ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀՈՒ ՄԱՂԹԱՆՔԸ.

Զօրացո՛ւր Յիսուս, այս նոր մանուկը,
Անարատ, անմեղ ծնուած գառնուկը.
Կենսատու Խաչդ թո՛ղ օգնի սորան,
Հայ արիւն կրի՝ Արամի նման.

Յանձնի՛ր Տէր, յաղթող հզօր հրեշտակիդ,
Որով նա վանէ՝ թշնամին Խաչիդ.
Պիտանի լինի ազգին Արամեան՝
Արի՛, Տիգրանի՝ Վահանի նման.

Պարգեւի՛ր, ո՛վ Տէր երկար կեանք սորան,
Լինի ազգասէր՝ ինչպէս էր Վարդան.
Զօրացո՛ւր այս տունկն, ճետ Հայկազեան՝
Գեղեցիկ ու վեհ Արայի նման.

Սիրի՛ր քո ազգը, մանո՛ւկ աննման,
Թող ցնծա՛ քեզնով՝ ազգդ Արամեան.
Լուսատու ղամբար եղի՛ր դու նորան,
Հալածի՛ր մութը՝ արեւի նման.

Քեզ Հայ եղբայրներ ուրուրեք որ կան,
Նոքա եւ քեզ հետ՝ Տէրամբ զօրանան.
Մեր Եկեղեցուն եւ մեր Ազգութեան՝
Պաշտպան կանգնեցէք՝ Վահանի նման.

Մանկաբարձուհիս իւր վերջին խօսքեր՝
Աւանդումէ ձեզ, անմե՛ղ մանուկներ.—
Դուք, որ Հայ ծնաք, սիրուն զաւակներ,
Սիրեցէք ձեր ազգը՝ զո՛ւտ Հայի նման.

Գրաշար Ներսէս Տ. Աւետիքեանց.